ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻԱՆԱՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԱՆՈՒՇ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմական Սյունիքի տարածքում, այժմյան Սիսիանի և Գորիսի շրջաններում, պահպանվել են վաղ միջնադարյան մի շարք հուշարձաններ, որոնց թվին են պատկանում նաև վեց միանավ եկեղեցի։ Սրանց մեծ մասը մինչև այժմ չի մտել մասնագիտական գրականության մեջ։ Այդ վեց հուշարձանները ներկայացնում են Հայաստանի վաղ միջնադարյան միանավ եկեղեցիների ոչ միայն երկու տիպերը՝ արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ ներգծված և



Տախտակ. Պատմական Սյունիքի միանավ հուշարձանների հատակագծերը։
Գծ. 1. Սպանդարյան, գծ. 2. Աղուդի, գծ. 3. Տեգ, Սոնեղցի, գծ. 4. Տեղ, ս. Գևորգ, գծ. 5. Թանահատ, գծ. 6. Վերիշեն, ս. Հռիփսիմե։

դուրս եկող արսիդով, այլև առաջին տիպի երկու ենթատիպերը՝ առանց լրացուցիչ կառուցվածքների և լրացուցիչ կառուցվածքներով։

Այդ հուշարձաններից Սիսիանի շրջանի Սպանդարյան գյուղի միանավ եկեղեցին (տախտակ. գծ. 1) պատկանում է արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ ներգծված արսիդով միանավ հուշարձանների առաջին՝ առանց լրացուցիչ կառուցվածքների ենթատիպին։ Եկեղեցին գտնվում է գյուղի հարավային մասում, Որոտան գետի խոր կիրճում։ Այն երկաստիճան որմնախարիսխի վրա կանգնած ուղղանկյուն սրահ է, որի արևելյան կողմում գտնվում է պայտաձև արսիդը։ Որմնախարիսխը հողով է ծածկված։ Հին պատերը պահպանվել են մոտ 2,5 մ բարձրությամբ, իսկ դրանց վերևի մասը շարված է XX դարում, անկանոն շարվածքով։ Հուշարձանի ներքին չափերն են 3,2×8,5 մ։ Սկզբնական կառույցից պահպանվել են մուտքերի երեք բացվածքները՝ արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատների վրա։ Այդ մուտքերից երկուսը՝ հյուսիսայինը և հարավայինը, այժմ շարվածքով փակված են։ Շինությունը, որից կառուցված է եկեղեցու պահպանված մասը, տաշված մոխրագույն բազալտ է՝ կրաշաղախով շարված։ Պատերի լայնությունը 1,04 մ է։ Սրանից կարելի է ենթադրել, որ սկզբնապես հուշարձանը ծածկված է եղել քարե թաղով։ Արևմտյան մուտքի բարավորը (ըստ երևույթին, մյուս երկու մուտքերինն էլ) կազմված է երկայնական ուղղությամբ միացված երկու մեծ քարերից։ Այդպիսի լուծում ունեն վաղ միջնադարյան շատ հուշարձանների բարավորներ։

Եկեղեցու դեկորատիվ հարդարանքը, որի մասին մենք կարող ենք դատել հյուսիսային և արևմտյան մուտքերի բարավորների վրա պահպանված զարդաքանդակներով, նույնպես շատ բնորոշ է այդ դարաշրջանի նույնատիպ հուշարձաններին։ Հյուսիսային մուտքի բարավորը զարդարված է շրջանագծի մեջ ներգծված հավասարաթև երկու խաչերով, իսկ արևմտյան մուտքի բարավորի վրա գտնվում են նույնպիսի շրջանագծի մեջ ներգծված հավասարաթև խաչ և նրա երկու կողմերում՝ վեցթևյա վարդյակներ։ Բարավորի ձախ ծայրին գտնվող խաչը և՛ իր ձևով, և՛ կատարման եղանակով թվում է ավելի ուշ ժամանակի գործ։

Միանավ հուշարձանների նույն ենթատիպին են պատկանում նաև Սիսիանի շրջանի Աղուդի գյուղի և Գորիսի շրջանի Տեղ գյուղի երկու եկեղեցիները («Սոնեղցի» և սբ. Գևորգ)։ Աղուդիի



Նկ. 1. Թանահատ։ Աբսիդի իմպոստները և կամարը։

եկեղեցին (տախտակ. գծ. 2), ավելի ճիշտ նրա պահպանված արևելյան մասը, գտնվում է գյուղի (որն իր հին՝ Ազիաու, անվան տակ հիշատակվում է Սա. Օրբելյանի Ծղուկ գավառի գյուղերի

ցուցակում[1]), կենտրոնում, VI—VII դարերի հանրահայտ մեմորիալ հուշարձանի հյուսիս-արևելյան անկյան մոտ։ Ինչպես գրում է Ե. Լալայանը, «...դյուզի զրեթե կենտրոնում գտնվում է մի եկեղեցու ավերակ, որի միայն սեղանի կամարն է... կանգուն մնացել»[2]։ Որ Ե. Լալայանը նկատի է ունեցել հենց այս կառուցվածքը, ապացուցվում է նրանով, որ հեղինակը նկարագրում է եկեղեցու մոտ պահպանված մեմորիալ հուշարձանը՝ սխալմամբ համարելով այն վերոհիշյալ եկեղեցու զանգակատունը։

Եկեղեցուց պահպանվել է միայն կիսաշրջանձև աբսիդը, որի լայնությունը 3,21 մ է, և հյուսիսային պատի մի հատված՝ 4,3 մ երկարությամբ։ Եկեղեցին կառուցված է կիսամշակ և անմշակ բազալտե քարերից՝ կրաշաղախով։ Այսպիսի շինարարական տեխնիկայով կառուցված հուշարձաններ քիչ են պատահում վաղ միջնադարյան եկեղեցիների թվում (Լուսակերտ, Վերիշեն)։ Պատերի լայնությունը 1,1 մ-ից 1,3 մ է։ Եթե մտովի շարունակենք եկեղեցու քանդված հարավային պատը, ապա նա կհատվի մեմորիալ հուշարձանի հետ։ Հիմա դժվար է ստույգ ասել՝ մեմորիալ հուշարձա՞նն է կառուցվել արդեն կիսաքանդ եկեղեցու պատին կից, թե՞, ընդհակառակը, եկեղեցին է կցվել հուշարձանին, բայց, բոլոր դեպքերում, այդպիսի մեմորիալ համալիրը (եկեղեցի, հուշարձան-կոթող և դամբարան, որն այս դեպքում չունի իր սովորական ճարտարապետական կերպարը)[3] բնորոշ է վաղ միջնադարյան հայ ճարտարապետությանը (Ամարասի վանքի ս. Գրիգորիսի դամբարանը, Աղցի, Զրվեժի մեմորիալ համալիրները և այլն)[4]։

Զևերի պարզությունը, պատերի զգալի հաստությունը, որտեղ գլխավոր կրող տարրը քարն է, և եկեղեցու գիրքը մեմորիալ հուշարձանի նկատմամբ թույլ են տալիս այն թվագրել վաղ միջնադարով՝ VI—VII դդ.։

Տեղ գյուղից մոտավորապես 6 կմ դեպի արևելք է գտնվում «Սոնեղցի» (այսինքն՝ սարալանջի վրա գտնվող եկեղեցի) կոչվող եկեղեցին (տախտակ. գծ. 3)։ Այն բավական լավ է պահպանված. քանդված է միայն տանիքը։ Հուշարձանը ներկայացնում է ոչ մեծ, համարյա քառակուսի կառուցվածք՝ 3,36×3,55 մ ներքին չափերով, որի արևելյան կողմում գտնվում է կիսաշրջանձև աբսիդը։ Մուտքը արևմտյան կողմում է (բացվածքի լայնությունն է 1,15 մ), երկու պատուհանները՝ արևելյան և արևմտյան կողմերում։ Հուշարձանի սրահի ոչ կանոնավոր ձևի քարերով սալարկված հատակը ցածր է աբսիդի հատակից 0,5 մ-ով։ Հետաքրքիր է լուծված հուշարձանի ինտերյերը. աբսիդի կամարի պարզ ձև ունեցող իմպոստը շարունակվում և 2,25 մ բարձրության վրա։ գոտեորում է բոլոր պատերը՝ բացի արևմտյանից։ Առաջանում է քիվ-գոտի, որի վրա է հենվում հուշարձանը ծածկող քարե թաղը։ Մեծ չափերի քարերից կառուցված այդ թաղը մեջտեղում ունի նեղ կար։ Յուրահատուկ է նաև զմբեթարդը. աբսիդի կամարի մեջտեղից գուրս է գալիս սեպաձև քար, նրան կցվում է ձվաձև քար, որից արդեն հավհարաձև տարածվում են զմբեթարդը կազմող քարերի շարքերը։ Մուտքի բարավորը ոչ միայն բնորոշ է վաղ միջնադարյան հուշարձաններին (կազմված է երկու երկայնական ուղղությամբ կրաշաղախով միացված քարերից), այլ նաև տարբերվում է նույնատիպ բարավորներից նրանով, որ քարերը նույն լայնությունը չունեն. ներսի կողմի քարը շատ ավելի լայն է (0,63 մ), քան դրսինը (0,25 մ)։ Ընդ որում դրսի կողմից բարավորը ուղղանկյուն է, ներսի կողմից՝ Π-աձև, անկյունային ելուստները ուղղված են դեպի վեր, որի վրա էլ հենվում է 0,7 մ խորություն ունեցող, բեռնաթափման խորշ առաջացնող կամարը։ Հուշարձանի պատերի լայնությունը 1 մ է, շինարարական նյութը տեղական սպիտակ, բազալտ հիշեցնող սրբատաշ քարն է՝ կրաշաղախով շարված։ Քարերի չափերը բավական մեծ են (միջին չափերը՝ 1,0×2,0 մ)։

Ինչ վերաբերում է դեկորատիվ հարդարանքին, ապա հուշարձանը շատ խիստ է լուծված. պատերը հարթ են, հյուսիսային և հարավային ճակատները՝ խուլ, իսկ արևելյանը և արևմտյանը զարդարված են միայն շատ պարզ, նեղ պատուհաններով և պատի հարթությունից հազիվ դուրս եկող պսակներով։ Մուտքի բարավորը զարդարված է խաչով։ Խաչեր կան նաև ուրիշ քարերի

---

1 «Ստեփանոս եպ. Սիւնեաց Պատմութիւն տանն Սիւնեաց», Մոսկվա, 1861, էջ 372։

2 «Ազգագրական հանդես», գիրք Գ., № 1, 1898, էջ 193։

3 Ս. Ս. Մնացականյանի կարծիքով, այս դեպքում դամբարանը ոչ թե որպես թաղման տեղ է, այլ սիմվոլիկ կենոտաֆ՝ կառուցված զոհված հերոսների պատվին («Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները», Երևան, 1982, էջ 130)։ Բոլոր դեպքերում, դա չի հակասում մեր ասածին։

4 Մ. Հասրաթյան, Ամարասի ճարտարապետական համալիրը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 5, էջ 35—53)։

վրա, բայց դրանք, հավանաբար, ավելի ուշ են արված։ Երկու հորիզոնական գոտիները՝ հուշարձանի քիվը և երկաստիճան որմնախարիսխը, շեշտում են պատերի հարթ ուղղաձգությունը։

Սբ. Գևորգ եկեղեցի (տախտակ. գծ. 4) գտնվում է Տեղ գյուղի կենտրոնում։ Ե. Լալայանը գրում է այդ եկեղեցու ձևափոխման մասին և բերում նոր կառուցված մասում գտնվող դռան ձախ կողմում և դռան «Յամարակալ քարի վրա» գտնվող արձանագրությունները[5], որոնցից վերջինը վերաբերում է եկեղեցու վերանորոգմանը՝ ՌՃՁԶ (1737) թվականին։ Այս եկեղեցու արձանագրություններին անդրադարձել է նաև Ս. Գ. Բարխուդարյանը[6]։

Չնայած եկեղեցին իր ողջ հորինվածքով և մանրամասներով շատ բնորոշ է վաղ միջնադարյան ժամանակաշրջանի համար, սակայն ուշ շրջանի արձանագրությունների առկայության հետևանքով, որոնցից հնագույնը պատկանում է 1451, իսկ նորագույնը՝ 1827 թ., այն սխալմամբ թվագրվել է XIV—XV դարերով[7]։

Ժամանակի ընթացքում հուշարձանը շատ փոփոխություններ է կրել։ Մեր կարծիքով այն կառուցողական երեք փուլ է ունեցել, առաջինը սկզբնական կառույցի շինարարությունն է վաղ միջնադարում, որից պահպանվել են պայտաձև աբսիդը և 6,4 մ երկարություն ունեցող հյուսիսային և հարավային պատերի հատվածները։ Հուշարձանի լայնությունը 4,22 մ է։ Աբսիդը պայտաձև է։ Պայտաձև է նաև աբսիդի կամարը, որը հենվում է պարզ խոյակներով իմպոստների վրա։ Հուշարձանի պահպանված մասում կան երկու զույգ որմնամույթեր՝ չհաշված այն երկուսը, որոնք կից են աբսիդին։ Որմնամույթերի առաջին զույգից սկսած, դեպի արևելք, եկեղեցու հատակը 0,15 մ բարձրանում է։ Աբսիդի կամարի իմպոստների հետ համեմման խոյակներ և խարիսխներ ունեցող որմնամույթերը սկզբնական շինության ժամանակակիցներն են, իսկ մնացածը, որ ավելի բարձր է կառուցված, անշուշտ, հուշարձանի պատմության II փուլի վերանորոգման արդյունք են։ Որմնամույթերը հուշարձանի լայնությամբ կամարներով չեն միանում, այսինքն՝ թաղակիր կամարներ չկան, բայց հյուսիսային և հարավային պատերի ուղղությամբ երկկենտրոն կամարներ են ձգվում ու հենվում որմնամույթների խոյակների վրա։ Այդպիսի ձևը դրանց ավելի ուշ ծագման վկայություն է։ Այդ կամարներից ամեն մեկը զույգ է կազմում՝ մեկը մի փոքր խորն է, մյուսը դուրս է գալիս և ներգծվում ուղիղ պատի մեջ, որի վրա էլ նստում է հուշարձանի թաղակապ ծածկը։

Հուշարձանի հին մասի հարավային կողմում պահպանվել է եկեղեցու նախնական մուտքը (լայնությունը 1,05 մ է), որն այժմ շարվածքով փակված է։ Մուտքի երկու կողմերում, դրսից, պահպանվել են երկու պահունակ։ Այդ նույն հարավային կողմի վրա բացված են բավական մեծ չափերի (ներսից դրանց լայնությունը 0,93 մ է), դեպի դուրս նեղացող, երկու լուսամուտ։ Ավելի փոքր չափերի մի լուսամուտ կա աբսիդում։ Հարավային կողմի լուսամուտները, անշուշտ, ավելի ուշ են բացված, քանի որ դրանցից արևմտյանը իր ներքևի անկյունով հատում է պատի վրայի հարդաքանդակը՝ 16-թերթյա ծաղիկով վարդյակը, որը քանդակված է սկզբնական մուտքի բարավորի վրա։ Կասկած չի հարուցում նաև այն, որ լուսամուտները շենքի հիմնական վերանորոգումից ավելի շուտ են բացված, քանի որ ներսում առաջին որմնամույթից դեպի երկրորդը ձգվող երկկենտրոն կամարը փակում է լուսամուտի վերևի մասը։ Հավանաբար, լուսամուտները բացվել են շենքի շինարարությունից մի փոքր անց, վաղ միջնադարում։ Այդ մասին են խոսում նաև դրանց մեծ չափերը։

Հուշարձանի հիմնական վերանորոգման ժամանակաշրջանին է վերաբերվում և նրա 6,85 մ երկարություն ունեցող արևմտյան մասը։ Շենքի հին և նոր մասերի կցման հանգույցները բավական անփույթ են արված. հյուսիսային կողմում նոր որմնամույթը կցված է հնին, ունի աստիճանական ձև, երկու խոյակ (ստեղծվում է երկու որմնամույթերի պատրանք) և շատ ավելի ցածր է հնից։ Հարավային կողմում նոր որմնամույթ ընդհանրապես չկա, և հյուսիսային նոր որմնամույթից ձգվող թաղակիր կամարը հենվում է հարավային պատի միջից դուրս եկող փոքր ելուստի վրա։ Մի թաղակիր կամար ևս, դեպի արևմուտք, հենվում է նոր որմնամույթերի երկրորդ զույգի վրա։ Նոր որմնամույթերը ունեն հների նման խոյակներ, բայց չունեն խարիսխներ և հենվում են անմիջականորեն հատակին։ Արևմտյան պատի վրա կա (այժմ շարվածքով փակված) լուսամուտ՝ նման հարավային բացվածքներին։ Հարավային պատի մեջ, շենքի նոր մասում,

---

5. «Ազգագրական հանդես», գիրք Դ, № 2, 1898, էջ 38։

6 Ս. Գ. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960, էջ 66—70։

7 Նույն տեղում։

կա ես մի մուտք՝ 0,7 մ լայնությամբ, որը ձևավորված է ծանր, պատի հաստությունից դուրս եկող շքամուտքի ձևով։

Շենքի կառուցման պատմության երրորդ փուլում (XIX դ. վերջ—XX դ. սկիզբ) արված վերանորոգմանն է վերաբերում նոր մասի երկրորդ հարկի կառուցումը։ Ընդ որում երկրորդ հարկը դուրս չի դալիս եկեղեցու ընդհանուր ծավալից, այլ տեղադրված է նույն բաձրության մեջ, այսինքն՝ շենքի նոր մասը, փաստորեն, բաժանված է երկու մասի։ Երկրորդ հարկի մուտքը գտնվում է հուշարձանի հյուսիսային կողմի վրա, որտեղ հատուկ աստիճաններ են կառուցված։ Երկրորդ հարկի մակարդակի վրա է գտնվում այժմ շարված լուսամուտը, որը բացվում է դեպի աղսթասրահ։ Հավանաբար, հենց այդ ժամանակ եկեղեցու ներսի պատերը և թաղը սվաղվել են։ Հուշարձանի շինությունը տեղական սրբատաշ դեղնավուն ֆելզիտն է՝ կրաշաղախով շարված։ Քարերը բավական մեծ չափերի են (միջին մեծության քարի երկարությունը 0,8 մ է)։ Պատերի հաստությունը 0,9 մ է։

Դեկորատիվ հարդարանքը միայն հուշարձանի հին, սկզբնական մասում է, որը շատ բնորոշ է վաղ միջնադարյան նույնատիպ կառուցվածքներին։ Հուշարձանի ներսում՝ արևիդին կից, հյուսիսային որմնասյան վրա, խարիսխից մի փոքր բարձր և հարավային կողմի երկրորդ որմնասյան խոյակի վերևում, կան երկու վեցթերթյա ծաղիկներով վարդյակներ։ Երեք համանման վարդյակներ, բայց բավական մեծ չափերի (0,4—0,5 մ տրամագծով), գտնվում են եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքի բարավորի, նրա վերևի և կողքի քարերի վրա։ Մուտքի բարավորը զարդաքանդակված է նաև մի մեծ, 16-թերթյա վարդյակով (տրամագիծը՝ 0,55 մ), որի մի մասը հետագայում կտրվել է լուսամուտ բացելու պատճառով։ Հարավային պատի արևելյան ծայրի ներքևից, չորրորդ շարքի քարի վրա, քանդակված է արևի ժամացույց, բայց գա, երևի, արված է շենքի հիմնական, ուշ միջնադարյան վերանորոգման ժամանակ։ Հուշարձանի արևելյան ճակատի վրա տեղադրված են երկու վարդյակ. մեկը վեցթերթյա ծաղիկով՝ լուսամուտի մակարդակին, մյուսը՝ ութթևանի ոճավորված աստղով՝ պատի ամենավերջին, զոհիթափը հարող շարքի քարի վրա։ Այդպիսի զարդաքանդակներ հանդիպում են նաև սիրիական վաղ միջնադարյան հուշարձանների վրա (Դեհեսի եռանավ բազիլիկա և այլն)[8]։ Հուշարձանը պսակող քիվը (ուղիղ և թեք սալերի ձևով) պարզ է և բնորոշ վաղ միջնադարյան հուշարձանների համար։ Դեկորատիվ մանրամասները, շինարարական տեխնիկան, կամարների պայտաձևությունը թույլ են տալիս հուշարձանի սկզբնական, հին մասը թվագրել V—VI դարերով։

Հաշորդ հուշարձանը, որը գտնվում է Սիսիանի շրջանի Արևիս գյուղից 3—4 կմ դեպի հարավ, լեռան լանջին, պատկանում է միանավ եկեղեցիների I տիպի երկրորդ՝ հիմնական ծավալին կից լրացուցիչ կառուցվածքներով հուշարձանների, ենթատիպին։ Դա Թանահատն է (տախտակ. դծ. 5), որը ժամանակին եղել է Սյունիքի նշանավոր վանքերից։ Այն գտնվել է պատմական Ծղուկ գավառում և հիշատակվում է Ստ. Օրբելյանի կազմած Սյունյաց նահանգի վանքերի ցուցակում՝ Տաթևից հետո, «մեծ առաքինարանն» անվան տակ[9]։ Թանահատին Ստ. Օրբելյանը մի առանձին գլուխ է նվիրել՝ «Վասն Թանահատի վանաց և հօրն Մխիթարայ» խորագրով, որտեղ նա գրում է. «400 ամօք յառաջ քան զհայ թուականն շինեցաւ եկեղեցին յիշխանացն Սիւնեաց յանուն սրբոյ Նախավկային Ստեփաննոսի»[10]։ Այս տեղեկությունը, ինչպես նաև վանքի դիրքը և նույնիսկ անվանումը հիմք են տալիս Ղևոնդ Ալիշանին ենթադրել, որ այն գոյություն է ունեցել դեռ հեթանոսական ժամանակներում և հանդիսացել է մեհյան, որը հետո «սրբեալ ի պաշտօն Աստուծոյ, ճշմարտի՝ ի Ս. Լուսաւորչէ կամ յորդաց նորին...»[11]։ Սակայն Ղ. Ալիշանը նաև կարծում է, թե, գուցե, գրիչը, արտագրելով Ստ. Օրբելյանի ձեռագիրը, սխալվել է՝ «4» տառի փոխարեն (քանի որ դրանք իրար նման են գրվել) գրելով «Ն», որը նշանակում է «400»[12]։ Վերջին ենթադրությունն ավելի հավանական է։

Թանահատի վանքն ունի վաղ միջնադարի նույնատիպ կառուցվածքների համար բնորոշ, բայց և յուրօրինակ ճարտարապետություն։ Այն որմնախարիսխի վրա բարձրացող ուղղանկյուն սրահ է, որի արևելյան կողմում գտնվում է պայտաձև արսիդը՝ 0,3 մ բարձրություն ունեցող

---

[8] H. G. Butler, Early churches in Syria. Forth to seventh centuries, Princeton 1929.

[9] «Ստեփաննոս եպ. Սիւնեաց Պատմիչն տանն Սիսական», էջ 248։

[10] Նույն տեղում, էջ 251։

[11] Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 225։

[12] Նույն տեղում, էջ 251։

բնում։ Մինչև այժմ Թանահատի հատակագիծը ներկայացվել է առանց որմնամույթերի (դրանք հայտնաբերվել են 1975 թ. պեղումների ժամանակ. պեղումների ղեկավար և վերակառուցման նախագծի հեղինակ՝ Հ. Գասպարյան)։ Երեք զույգ Т-աձև որմնամույթերը սրահը բաժանում են չորս մասի։ Արևելքին և արևմտյան պատին կից որմնամույթերը ուղղանկյուն են։ Դրանք շինարարական կապ չունեն պատերի հետ, որն էլ վկայում է դրանց՝ ուշ միջնադարում ավելացված լինելու մասին։ Դրա վկայությունն է նաև այն, որ հարավ-արևմտյան մասի երկու որմնամույթերը մասամբ փակում են հուշարձանի մուտքերը։ Դա նշանակում է, որ հուշարձանը սկզբնապես ունեցել է փայտե ծածկ, որը հետագայում, որմնամույթեր ավելացնելուց հետո, փոխարինվել է քարե թաղով։ Մուտքերը երկուսն են՝ արևմտյան և հարավային։ Հարավային մուտքի պահպանված բարավորը վաղ միջնադարի համար բնորոշ ձև ունի՝ երկու մեծ ուղղանկյուն քարե սալ՝ երկայնական ուղղությամբ միացված միմյանց։ Դրանց մեջտեղով անցնում է նեղ քարերից կազմված մի կար։ Հարավային կողմից սրահին կից է համարյա քառակուսի մեկ ավանդատուն, որն արևելյան մասում չունի աբսիդ, բայց արևմտյան կողմում ունի 1,40×1,81 մ չափերով կամարակապ խորշ։ Կամարը պայտաձև է։ Ավանդատանը կից, շենքի հարավային կողմում գտնվել է արտաքին սրահը։ Այդ են վկայում պատի հատվածը, հինգ սյուների պահպանված խարիսխները և մեկ սյան բնի բեկորը։ Սյուները ունեն բավական յուրօրինակ ձև. խարիսխները կլոր են՝ դրված ողղանկյուն բարակ սալի վրա, իսկ սյան բունը բազմանիստ է (8 և 16 նիստ)։ Խոյակների վրա արված ակոսները թույլ են տալիս ենթադրել, որ դրանց մեջ է նստել արտաքին սրահի փայտե ծածկը կրող հեծանը։ Հեծանների հակառակ ծայրերը հենվել են դիմացի պատի վրա գտնվող պահունակներին, որոնցից տեղում պահպանվել է մեկը։

Հետաքրքիր է հուշարձանի դեկորատիվ հարդարանքը։ Այն տարբերվում է այդ շրջանի նույնատիպ կառուցվածքներից հիմնականում մշակվածության ավելի բարձր աստիճանով և յուրօրինակությամբ։ Աբսիդի պայտաձև կամարը (նկ. 1) երիզված է ատամնավոր գոտիով, որը բնորոշ է ոչ միայն Հայաստանի վաղ միջնադարյան նույնատիպ հուշարձաններին, այլև՝ Սիրիայի և Փոքր Ասիայի ու գալիս է դեռ նախաքրիստոնեական ճարտարապետությունից։ Իմպոստները, որոնց վրա հենվում է կամարը, զարդաքանդակված են՝ դեպի դահլիճը նայող կողմերը զույգ ծաղիկներով, իսկ վերևի սալը՝ բուսական-երկրաչափական մոտիվներ ունեցող զարդանախշով։ Զարդաքանդակված են նաև արտաքին սրահի սյուների խարիսխները։



Նկ. 2. Վերիշեն։ Ս. Հռիփսիմե եկեղեցին։

Նկ. 3. Վերիշեն։ Ս. Հռիփսիմե եկեղեցու հարավային մուտքի պահունակը։

Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի սբ. Հռիփսիմե եկեղեցին պատկանում է սրահավոր եկեղե-

ցիների երկրորդ տիպին՝ արևելյան պատի ծավալից դուրս եկող աբսիդներով հուշարձաններին[13]։

Սբ. Հռիփսիմե եկեղեցին (նկ. 2) հետաքրքիր է նրանով, որ պատկանում է այն սակավաթիվ հուշարձանների թվին, որոնց աբսիդը դրսից կիսաշրջանաձև է (տախտակ, դծ. 6) և ոչ թե բազմանիստ՝ ինչպես այդ տիպի հուշարձանների մեծ մասը։ Դրսից կիսաշրջանաձև աբսիդ ունեն նաև Ցուլակերտի, Լուսակերտի, Բատիկյանի վաղ միջնադարյան սրահավոր եկեղեցիները[14]։ Հուշարձանի ներքին չափերն են՝ 20,9×4,5 մ։ Հինգ զույգ որմնամույթերով ներքին տարածությունը բաժանվում է 6 մասի։ Որմնամույթերը այնքան լայն են, որ դրանց միջև եղած տարածությունները խորշերի տպավորություն են թողնում։ Այդ «խորշերը» ավարտվում են դնդնավուն, ծակոտկեն քարերից շարված երկկենտրոն կամարներով, մինչդեռ ողջ հուշարձանը կառուցված է տեղական անմշակ, մոխրագույն բազալտից՝ կրաշաղախով։ Հուշարձանի մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հարավից։ Արևմտյան մուտքը, հավանաբար, ավելի ուշ վերանորոգման հետևանքով ստացել է երկկենտրոն վերշավորություն։ Բարավոր է ծառայում երկայնական կողմի վրա դրված խաչքարը։ Հարավային մուտքը երիզված է անկյունը կտրված քառանկյուն քարե երեսկալով։ Այդ մուտքից դեպի արևելք կա այժմ պատուհանի տեսք տրված մի բացվածք, որը, հավանաբար, նախկինում մուտք է եղել։ Այդ են վկայում պատուհանի համար անսովոր մեծ չափերը (0,84×1,45 մ) և բացվածքից դեպի արևմուտք, պատի շարվածքի մեջ դրված պահունակը (նկ. 3), որի վրա քանդակված է վաղ միջնադարի համար շատ բնորոշ վեցթերթյա ծաղիկով վարդյակ։ Այդ պահունակը, անշուշտ, ունեցել է իրեն սիմետրիկ դրվածը և ծառայել է մուտքը ձևավորող կամարը կրելու համար։ Մյուս պատուհանների բացվածքները, որոնք խաչաձև են, ավելի ուշ արված վերակառուցումների արդյունք են թվում։ Ներսից պատերի վրա պահպանվել են ավազի հետքեր։ Այն, որ հուշարձանը կառուցված է անմշակ քարերից, չի բացառում նրա՝ վաղ միջնադարյան նույնատիպ շինությունների (հիմնականում՝ սրբատաշ քարերից կառուցված) շարքին պատկանելու փաստը, քանի որ, ինչպես վերը ասվեց, շինարարական այդպիսի տեխնիկայով կառուցված հուշարձանները օտար չեն Հայաստանի վաղ միջնադարյան ճարտարապետությանը։ Կարելի է նույնիսկ ենթադրել, որ դրանք կառուցվել են ավելի վաղ, որովհետև անմիջական կապ ունեն նախաքրիստոնեական Հայաստանի հուշարձանների շինարարական տեխնիկայի հետ[15]։

Այսպիսով, պատմական Սյունիքի տարածքի վրա գտնվող այս վեց հուշարձանները, որոնք միավորված են ժամանակաշրջանի և տիպի համար բնորոշ բազմաթիվ հատկանիշներով, իրարից նախ՝ տարբերվում են յուրահատուկ մանրամասներով՝ ինչպես հատակագծածավալային կոմպոզիցիաներում, այնպես էլ դեկորատիվ հարդարանքում և նույնիսկ՝ շինարարական տեխնիկայում։ Դրանք վկայում են այն մասին, որ պատմական Սյունիքի ճարտարապետությանը վաղ միջնադարում խորթ չէին նաև միանավ հուշարձանները՝ իրենց բոլոր ենթատիպերով։

РАННЕСРЕДНЕВЕКОВЫЕ ЗАЛЬНЫЕ ПАМЯТНИКИ ИСТОРИЧЕСКОГО СЮНИКА

АНУШ ТЕР-МИНАСЯН

Резюме

На территории исторического Сюника сохранился ряд раннесредневековых памятников, к числу которых относятся и шесть зальных церквей, находящихся в Сисианском и Горисском районах Арм.ССР. Четыре из этих памятников—зальные церкви а селах Спандарян, Агуди (Сисианский район) и две церкви в селе Тег (Горисский район)—представляют группу памятников без примыкающих к основному объему дополнительных помещений одного из двух подтипов зальных церквей—с вписанными в

---

13 Մ. Հարությունյան, Հայաստանի արտաքուստ շեղված աբսիդով միանավ հուշարձաններ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 11, էջ 27)։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում, էջ 30։

прямоугольный контур внешних стен абсидами. Другой памятник—монастырь Танаат у села Аревис (Сисианский район)—имеет с южной стороны примыкающий к церкви придел и соответствующую ему галерею, от которой сохранились пять круглых баз и один многогранный ствол колонн. Он представляет другую группу памятников первого подтипа—с дополнительными помещениями. И, наконец, последний памятник—церковь св. Рипсимэ села Веришен (Горисский район)—имеет полукруглую снаружи алтарную абсиду и относится ко второму подтипу зальных церквей—с выступающими из плоскости восточной стены абсидами.

Все эти памятники, объединенные многими характерными для эпохи и типа признаками, отличаются своеобразными деталями как в планово-объемной композиции, так и декоративном убранстве и даже строительной технике. Они свидетельствуют о том, что архитектуре исторического Сюника в раннем средневековье не чужды были и зальные церкви во всех своих подтипах.